Մեր յաճախակի հարցմանց ի Թորթում եւ այլուր թէ ի՛նչ են իրենք իրականին՝ պատասխանը կ'ըլլար նախ միշտ մահմետականացածներուն այն հաստատուն խօսքը թէ "Իսլամ ենք,,։ Բայց նաեւ այս "իսլամք,, գիտէին թէ իսլամ զանազան ցեղեր կան։ Մեր հարցման թէ իրենք ուրեմն "Թո՞ւրք,, էին, լա՞զ թէ այլ ինչ, բացորոշ կը ժխտէին՝ ըսելով թէ չենք ո՛չ Թուրք ենք, ո՛չ Լազ, ո՛չ "Կիւրճի,, ո՛չ Քուրտ, ո՛չ Չէրքէզ, միով բանիւ ո՛չ ազգ ու ցեղ մը՝ որ հոս կրնար ի նկատի առնուիլ։ Բայց նաեւ "Հայ ենք,, չէին կրնար ըսել. որովհետեւ "Հայ,, եւ "Քրիստոնեայ,, համազօր բառեր եղած են հոս, ինչպէս ուրիշ շատ տեղեր ալ։ "Մեր պապերը (իսլամական) ճշմարիտ կրօնքը գտեր են, եւ ասի կը բաւէ,,։ — այս էր վերջնական պատասխանը։ Միւս կողմանէ յաճախ կը պարծէին թէ "իրենց պապերը,, շինած են այն հայակերտ կանգուն (ու մզկիթ եղած) կամ նաեւ աւերակ եկեղեցիները։ Խնդիր չկայ թէ նաեւ հոս հայ-մահմետական կինը շատ աւելի պահած է իւր բարբառն ու քրիստոնէական սովորութիւնները։

Հայ-մահմետականը կրօնափոխ եղած